ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ապրիլի 2013թ. N__-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.22 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ Հ.99 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևանի քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի հ.580-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Աջափնյակ վարչական շրջանի, Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի 5-րդ հարկի հ.99 երեք սենյականոց բնակարանն անհատույց օտարել (նվիրել) Մարիամ Ղազարյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.22 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ Հ.99 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն որոշման նախագծով բնակարան է հատկացվում Երևանի Պարոնյանի անվան պետական երաժշտական կոմեդիայի թատրոնի դերասանուհի, ՀՀ «Մովսես Խորենացի» մեդալակիր, ՀՀ վաստակավոր արտիստուհի Մարիամ Ղազարյանին։

ՀՀ վաստակավոր արտիստուհի Մարիամ Ղազարյանը դերասանուհի լինելուց բացի «բեմական խոսք» է դասավանդում Պարոնյանի անվան թատրոնին կից ստուդիայում, ցանկանում է կազմակերպել անվճար դասընթացներ, որի համար չունի անհրաժեշտ պայմաններ։ Արտիստուհին խնդրել է իրեն բնակարան հատկացնել Սիսակյան փողոցի հ.22 նորակառույց շենքից։

Նա իր քրտնաջան և անմնացորդ աշխատանքի շնորհիվ վայելում է բազմահազար հանդիսատեսի սերն ու համակրանքը։

Հաշվի առնելով ՀՀ վաստակավոր արտիստուհու խնդրանքը՝ նպատակահարմար գտնվեց Սիսակյան փողոցի հ.22 շենքի հ.99 բնակարանը նվիրել նրան, որը թույլ կտա արվեստի վաստակավոր գործչին լիարժեք ստեղծագործական գործունեություն ծավալել։

Ելնելով վերոգրյալից նախապատրաստվել է սույն ավագանու որոշումը, որի ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.22 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ Հ.99 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի հ.99 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԻՍԱԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.22 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ՇԵՆՔԻ Հ.99 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի Սիսակյան փողոցի հ.22 հասցեում կառուցվող շենքի հ.99 բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ